

ընդ մեզ, և բեւեռեցէ զՎրս Վեր ընդ իւ-
լափայտին, և մահաւոր զէշեանսնինն
մահա իափանեցէ. և երէտաւորեալ(յ) յա-
բաղեալ, և նապեալ ընդ ամէն Հաւր 'ի
կեանս: Եւ յարումնին մեզ պարբեւեաց,
և աւերաբանեաց իողաղումնին հեռաւո-
րաց և մեքնաւորաց: Եւ Վարք Հոփն ա-
ւաթեաց և միկնաւորեաց զաւաթեալս հրեղի-
նաւ լիւսաւոր, առ բանն ընդբումնեան
աղբաց, յորս աւաթելումնեան եր (°). և զի
այսպէս պարտ էր շարլարել Գրիգորոսի ըստ
աւրինաց և մարգարէից, և մեռանել և յեր-
բորդ առաւր յառնել, և մորանել 'ի գոռա
խոր: Եւ իւրեղիլ յանան նորա ապաշխո-
բումնին 'ի լուսումնին մեղաց, 'ի յեան ա-
շափեւորացն: Եւ նշանաւ և արանեալիւ
և զաւրումնեմք յայտ արարեալ յամենայն
աղբա աղբեցումնեմք: Եւ Սարք Հոփայն
երկեալ, զի իւրեղեցի աւերաբանն արաւ-
յումնեան ընդ ամենայնս, և ապա եկեացէ իւ-
րաւոր. յոր դարձեալ քայ 'ի դարաստան
դարեւ զկենդանին և զմեռեալս: Որտ հա-
ապաքին յԱպրառած և քործեցին զաւ-
րաւումնին, յառանգորդս իւր առնէ, և
յարդայումնին իւր մոծանէ. իսկ որ աւա-
ցան զամենաստարք Երբորդումնին, և քոր-
ծեցին զանխառնումնին, մարցն 'ի պարթեա-
լս երկնցն արդարեւ 'ի կեանս յաւիտեա-
լս, և մեղաւորսն 'ի դանջանս յաւիտե-
նից:

Շարայտեղի

ՀԱՅՔ ԵՒ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Տես յէջ 37)

ՀԱՅԿԵԱՆ զլիաւոր գաղութներէ մին
է իրանեան—Արին զէպ յարեւս. իրանեան
լեզուի Հնդկիկ—Արիականի հետ ունեցած սերտ
յարաբերութիւնն և եղբայրակցութեան նկա-
րագիրն՝ այսպէս կ'ընէ M. Fontane, (Ira-
niens, p. 56). « La remarque primitive
d'où naquit l'idée de l'origine com-
mune du zend-iranien et du sanscrit-
védique, ce fut que le mot *arya* par
lequel le peuple élu se désignait, é-

tait le même dans les deux langues ». —
Թէ այս էր բուն առաջին շարժառիթն այս եր-
կու համասեւ ծննդոց բաղդատութեան՝ թէ այլ
ինչ, մեզ չէ շատ փոյթ. միայն զիտելի է զի
վերոյիշեալն մեծապէս նպաստաւոր է մեր
խնդրոյն. ըստ որում թէ և յապազայ ժամա-
նակս (Սասանեանց հարստութեան) ստիորա-
կան դարձած լինի Արի բառին գործածութիւնն,
սակայն և այնպէս այդ բառ Հայուն ոչ միայն
ստիորական է՝ այլ և ընտանի և բնիկ և ծննդա-

կան. Այր, Արու, Արա, և Արարատ, և Սար-արատ բառերու արմատակից է Արի բառն. Զանդիկի և Սանսկրիտի նմանութիւնք են կ'ըսէ նոյն հեղինակն. — Trois voyelles de commun, un même mode de flexion, neuf consonnes explosibles, deux nasales, une vibrante, une sifflante-dentale, le v et l'y; trois genres, trois nombres, huit cas, un verbe de deux voyaux, six temps, trois modes. — Ces points de ressemblance devinrent les éléments d'une langue-mère désirée. Il y eut, ensuite, un autre travail consistant à prendre aux deux langues tous les mots de même nature, pour en faire comme le vocabulaire ingénieux de la langue primitive cherchée. — Cette langue-mère, ainsi entrevue, devint la « langue-indo-européenne », de laquelle on fit dériver l'Aryen ou indou, l'iranien ou persique, le pélasgique ou hellénique, l'italique, le slave; le lottique, le germanique, et le celtique. C'est en comparant, en analysant les mots communs à la plupart ou à l'ensemble des nations aryennes que les philologues reconstituèrent la vie d'un peuple encore inconnue des historiens. — Այս հակիրճ և հարեանցի տեսութեան մէջ բնաւ հայկական լեզուի խօսքն և յիշատակութիւնն չկայ. միայն վերջին բառերն կարծես թէ առ այն ուղեեալ ակնարկ մ'է, իբր սոյն՝ թէ Les philologues reconstitueront la vie d'un peuple encore moins connue des historiens ». — Նոյն այս բանն է որ այսօր Եւրոպայիոյ հռչակաւոր բանդէաքն կը դրաղեցունեն. նոյն այս է կարծեմ և հեղինակին հետեւեալն. « Le zend est la langue iranienne ou éranienne par excellence, comme le sanscrit est la langue caractéristique des Aryas de l'Indoustan. Bien que la classification des langues iraniennes soit encore un sujet d'études très délicat, il semble que l'on puisse comprendre sous cette désignation, le Zend, l'ancien

perse et l'antique arménien ». (Les Iran. p. 54). յորում Զանդիկն կամ իրանեան լեզու անունն ընդհանուր անուն կը կարծէ, և ընտրելագոյն բարբառ, և սոյն դասուն կը վերադրէ հայերէնն (Ե. Գարու), առանց ակնարկ մի տալու նախնագոյն հայերէնի վրայ: Սակայն յայտ է որ Զանդիկն քան ըլնախին պարսիկն աւելի հարուստ է, և շերտ հաղորդակցութիւն ունի և յարակցութիւն մեր բարբառոյն հետ. ուստի, « Ces rapprochements ayant donné aux linguistes l'impression d'une certaine unité, l'on formula cette théorie, que, « Cette ensemble d'idiomes, qui étaient ou qui sont encore parlés entre le Caucase et le Pendjâb » y compris le sanscrit védique, dérivait d'un même langage primitif ». — Այսու Կաւկասիոյ հիւսիսէն մինչև Եօթն գետոց արեւելքն՝ ի'նչ լեզու որ կը գտնուէր՝ ամենն ալ համաեւ ծընունդ միոյ նախնական լեզուի՝ հասարակաց Մօր, ընդունուեցաւ: Այս հասարակաց Մօր՝ Նախալեզուն՝ էութիւնն, ուստի ծնան զթիւէ առհասարակ Գանգեսեան աղբիւրէն մինչև յառմուտս Եւրոպայիոյ բնակող ազգաց բարբառքն, և զոյգ ընդ նմին՝ իբր հետեւութիւն՝ նախնական բնիկ ժողովրդեան մը էութիւնն, (Արիական ցեղի), որ զայդ Նախալեզուն խօսած է, իբր կրկին անդիմադոյնի վարդապետութիւնք, ընդունուեցան:

Tout nous porte à croire, k'ըսէ Max Müller, que cette langue a été autrefois une langue vivante, parlée en Asie, par une petite tribu, et à l'origine par une petite famille vivante sous un seul toit, de même que la langue de Camoëns, de Cervantes, de Voltaire et de Dante fut autrefois parlée par quelques paysans, qui avaient bâti leurs cabanes sur les Sept collines près du Tibre ». — Նոյն ըմբռնումն ունի և Chavée որ կ'ըսէ. Les langues indo-européennes, ne sont pour le linguiste que des variétés d'une langue unique et primordiale, parlée jadis au centre de l'Asie.

Արիական կեդրոնատեղին ընդարձակ առումն

ունենալով՝ լեզուաբնական աշխատութեամբք
և հնախուզական զիտից արդեամբ՝ պիտի կա-
րենամբ ճշդիւ սահման և անուն որոշել այդ
կեդրոնին, ըսած եմք : — Եւ մեք ըստ ցարդ
աւանդած հնախօսական ապացւոցից ճշմարտու-
թիւնն կը քարոզեմք այդ կեդրոնն, նախ սեղմ
սահմանաւ Արարատն, և ապա ընդարձակ տե-
տութեամբ մեր բնաւայրն Հայոց աշխարհն, ը-
տելով. — Այդ նախնական փորքիկ ցեղին և
համասեռ բնատնեաց անձուկ սահմանն՝ ուր
նախնական լեզուն (Մայր բարբառն) կը խօ-
սուէր, մեր բնագաւառն Արարատ նահանգն է :

Arya բառին և իմաստին և անուան նկատ-
մամբ կը կրկնեմք. Արի ծնունդ է Ար արմա-
տոյ. Արի, — Արիական, — Այր, — Այ-
րական, — Աւնի : — Արու, — Արա-
կան, — Այրութիւն, — Արութիւն, —
Այրարատ, — Արարատ, — Մարարադ, —
Հայր, — Հայրենի. — մի և նոյն արմատի
ծնունդք են : Իրան, — Երան, Eèriene
Vaedjo, ՀԱՅՐԵՆԻ կը նշանակեն, և
այդ, ար արմատէ ծագումն ունին. այդ անուն
կը նշանակէ Հօր կամ Արդ սեպհական բնա-
կարան, տուն, հող. և այլն : Այս արմատա-
կանք հօր փաստ են ցոյց տալու՝ թէ հայն
արիական ցեղին բնիկ ժողովուրդն է եղած, և
Հայրենեաց (Eèriene) երկրին հարազատ ժա-
նանգն : —

Չանդիկ լեզուին ընդ մերոյս ունեցած սերտ
յարաբերութիւնն ակն յայտնի է : Որչափ ինչ
սանսկրիտն՝ նոյն է և զանգիկն թէ լեզուական
և թէ կրօնական զազափարաւ : Չանդիկ բար-
բառոյ համար M. Fontane հետեւեալ հետա-
քրքրական սոգներն կը նուիրէ մեզ. « Le
Zend dont l'idiome bactrien est le
meilleur type, — a deux dialectes con-
nus: l'un ordinaire, l'autre dit des
« Gathas » ou « Montagnards ».

« Montagnard » Հայոց կեդրոնաւայրին՝
Արարատեան գաւառին անպատշաճ բառեր չեն,
պիտի տեսնեմք ապա և Քաղզէականին մէջ
նոյն « Գաթ » (Montagnard) անունն յառ-
կացած. Հայ աշխարհի և նորա ժողովրդոց
և զաղութներու, և նոցա բնիկ սեպհական նա-
խայեզուին, Արարատեան բարբառոյ : — Ի-
րանեան կրօնականն նոյն է ընդ Հնդկի Արիա-

կանաց նախնական զազափարին. զոր առան-
ձինն պիտի քննեմք :

Սնշուշտ ոչ յուսեմք յանդուպն երևոյթ ու-
նենալ կարծուի մեր յետագայ եզրակացու-
թիւնն. ≡ Հայկական (ժանթ) լեզուի հա-
րուստ զանձարանն՝ իւր արմատական և բառա-
կան կազմութեամբք, հնդկ-արիականի (ուսն-
կրիտի) և իրանեան (զանդիկ) լեզուաց հետ,
հին և նոր պարսկականի և պահլաւիկ՝ և այլ
մերձակայից հետ ունեցած համամատուցութեամբն,
կարծելու չեմք՝ թէ այդ արմատք և բառք օ-
տարածին սերում մ'ունեցած ըլլան ՚ի բնիկ
Արարատեանէն. — այլ ընդհակառակն՝ Արա-
րատեան ծնունդ ըլլալով՝ գոցէ թէ իւր գա-
ղութներու հետ ճանապարհորդած է, և նոցա
հետ փոփոխութեանց ենթարկուած, և զանա-
զան պարագայից բերմամբ իւր նոր երևութիւն
մտած է ՚ի Հայրենի գաւառն :

Քաղզէական ազգին՝ որոյ բնիկ սեմական
ծագումն կու տայ հնախօսութիւնն, յայտնապէս
արիական զաղութ մ'ըլլալն ապացուցինք ՚ի
Հայոց աշխարհէն, անուանական և կրօնական
առանձին յիշատակութեամբ մը, Խորասպատու
արձանագրութեանց վրայ յեցեալ : Քաղզէա-
կան նախնական լեզուն՝ զոր Աքադեան բար-
բառ կոչած են լեզուաբնիկնք, արմատական և
նրբին ազգակցութիւն ցոյց կու տայ հայկական
լեզուի հետ, ինչպէս մանրակրկիտ ուսումնասի-
թութեամբ հետազոտած է լեզուաբնիկն ազ-
գայինն Մագդը. Յովհաննէս Լճէնտի : Աքադ
անունն կը նշանակէ Montagnard, և զոր ի-
րաւամբ կը պատշաճեցունեն Արարատեան ազ-
գին և վայրին : Լեզուական արմատական նմա-
նութիւնն զոր կը գտնէ վերոյիշեալն, կը նոյ-
նացունեն այդ երկու լեզուներու հիմունքն.
Montagnard անունն զոր կրկին զրացի ազգք
կը վարեն՝ իրենց լեզուին և ցեղին իբր սեպ-
հական յատկանուն, կը չէզոքանան երրորդին
հետ՝ որ է հայկական լեռնաւայրն, իրենց բը-
նական յարկն, մայրն, ծնողն և կեդրոնատե-
ղին : Կրօնական յարաբերութիւնք, բարուց և
կենաց նմանութիւնք, վերջինն են հարազատ
որդիակցութեամբ ծնողական նմանողութեան :

Մինչ զեռ ևս Ասորեստանեայք իրենց նախ-
կին թմրիքէն չէին սթափած, մինչ զեռ Ասո-
րեստան իւր անձն չէր ճանչցած, Քաղզիք ի-

րենց զազուլներն կազմած՝ յարդարած և զետեղած, հոկայաբայլ կը յառաշեն։ Միշագետաց և Քաղզէաստանի դիրքն յայտնապէս կը ցուցնեն՝ որ Եփրատայ գետաբերանն (Քաղզէաստան) նախ քան զՆինուէ և Բաբելոն բռնակելի չէր կարող լինել։ ուստի Քաղզիք կամ Խաղտիք նախ քան դժբաղդէաստան՝ Միշագետքն գրաւած են և հոն շինած իրենց նախկին քաղաքն Աբաղ, Բաբելոնի արևմտակողմն նոյն աստիճանի վրայ։ Տակաւ առ սակաւ հաւաւային ցամաքին ամենայն՝ դարուց հոլովմամբ, ծանօթ Քաղզէաստանն յառաջ եկած է։ M. Fontane (Les Arias), կ'ըսէ. « Նոր գիւտ մը քաղզէական սքանչելեաց կոյտ մը մեզ կը ներկայացնէ, ասորական հնութիւններէ շատ հին »։ Աբաղ քաղաքի հիւսիսակողմն՝ Տիգրիսի վրայ է Սումիր. որ Թուր Թէ առանձին ազգատոմի բնակարան էր. ինչպէս կ'երևի Առքեստանի վեհապետաց « Աբգայ Սումիրաց և Աբգայաց » յորջորջումէն։ Աբաղեանք՝ Քաղզիք էին. իսկ Սումիրք՝ Տուրանեանք։ Վերջինք իրանեան ազգեցութիւնն կրած՝ իրանեան—Արիաստանի հիւսիսէն (Տուրան), Պորճ և Չաղրուս լերանց զօտի կարելով՝ կու գան Տիգրիսի ամուրնը և և բնական ճամբով՝ միշտ գետափին քերելով դէպ ի հարաւ ի Միշագետս կ'իջնեն և Սումիր քաղաքն կը կանգնեն։ Հաղորդակցութեանց և յարաբերութեանց հետեւանք կը լինի կրկին ցեղից իրարու հետ խառնուիլն լեզուով, բարբառով, և արեւմբ։ Սոյն և սոյնօրինակ զաղթական ազգաց ձուլմունք և խառնուրդք՝ բարոյից հետ նաև իրգական արմատներ և բառեր փոխանցած են իրարու և կրօնական սկզբունք։

Մեր բնաշխարհն իւր բնադրձակ սահմանաւն արդեօք մի միայն Արիական տոհմին խանձաբուրքն եղած է, Թէ և այլոց, չեմք ուզեր խօսիլ։ սակայն այսպիսի յայտնի է՝ որ Արիական տոհմէն զատ՝ որ Արարատեան կեդրոնն գրաւած էր, կային նաև այլ տոհմերու ծնունդք և բնակութիւնք, յորոց՝ հաւատար արիականաց եթէ չհամարիմ և, սակայն ծագած են զանազան զաղութիւն նախապատմական ժամանակաց մէջ։

Ուստի այլ ևս մտնելով մեր սեպհական սահմանաց մէջ աւելի մօտէն գիտեմք բնիկ Արիական Հայ ժողովրդեան էութիւնն։

Լեզու՝ մարդկային կենաց պատմութիւնն և յայտարար նշանն է։ իսկ երաժշտութիւնն՝ նոյն կենաց կրից բացատրութիւնն, կամ նոցոն արտայայտման այլ օրինակ այլ կենդանի մի պատկերն։

Ազգաց ծնունդք զազուլներէ յառաջ եկած են. սակայն ամեն ազգ ունեցած է իւր սեպհական կեանքն, ուրոյն պատահարքն, առանձինն յատկութիւնքն, ծնունդն և ամուսն, բարձրութիւնն և խոնարհութիւնն։ Իւրաքանչիւր ազգ մերթ իւր յատուկ շրջանակին մէջ վարած է իւր օրերն, մերթ իւր սահմանակցաց ազգեցութիւնն կրած՝ յանգզայս իսկ երբեմն, և մերթ ինքն ազգած է այլոց վրայ։ — Այս ամենն կիրք են, մերթ հրճուականք և երբեմն տխրականք։ — Մարդոյ ինչպէս միտքն՝ նոյնպէս և ոգին լնացեալ վիճակ չկարեն ունենալ. պէտք է շարժին, ուստի կը թրթռան, կ'երեւան, զրդեն և զրդին։ Մերթ ոգին աշխարհ զիպաց դիմակալ՝ կ'ամփոփի. չէ զուարթ, կը տխրի, հակառակքն չնահանջին՝ կու լայ, մահանայ։ Մերթ խանդիւ մտռալ է, Թռչոյր. ուրախ է՝ ծիծաղի, յաջողի՝ խնայ։ Եւ մերթ տառամանաց կոհակօք շլատի, ասորութիւն, կը ծփի։

Ինչպէս միտքն կը ճգնի զայս ամենն ըմբռնել, իւրացունել և լեզուաւ թարգմանել, նոյնպէս ոգին զայն կը ջանայ պատկերել, կերպացունել, ոգևորել և ոգել։

Կրից կերպարանք ըստ զիմաց կը փոխին, սակայն կրօնն և կրածն միաձև է։ Իւրաքանչիւր անհատ միօրինակ ենթակայի նոյն կրից, այլ ոչ մի և նոյն դիմօք և ոչ նոյն եղանակաւ։ Վաղափարն նոյն է, կերպն՝ և մերթ միջոցն տարբերի։ Իմաստն նոյն է, կերպն փոփոխի։

Հայ ազգն ալ բնական և անբնական կրից հնազանդ, անցուցած է դարուց երկայն շրջաններ, յորս իւր սեպհական լեզուին հետ ունեցած է բնիկ երաժշտութիւնն ալ, ոգևորութիւնն ևս խայտանքն, իբր կենդանի պատկեր իւր կրից։ Եւ այնքան աւելի բնական և պարզ եղած է այդ տառետտն առ Հայոյ, որքան իւր բնակարանն և բնակիչ բնութեան համապատասխան հարազատ ծնունդք, իւր էութիւնն և լեզուն և բարին այնչափ աւելի ուշադրաւ, որչափ իւր տարեւոր կենաց շրջանքն ալեւոր։

Ո՛վ ըսաւ Թէ հայածին մայրն իւր երկանց

յաջողակ ծննդեամբն չվառեցաւ, բորբոքեցաւ, և առաջին խանդն իւր անդրանկին գլուխն չպսակեց օրհնիսներ հանելով այն զաւակին, որ հայր և պետ լինել սահմանուած էր աստուած ծաստան պրակտին նուիրական արիական սըրբութեանց: — Ո՛ր ըսաւ թէ հայ հայրն չերգեց, չնուագեց իւր զաւակին լաւութիւնքն. մինչ Ալուոյն փրփրադէպ քառուքն 'ի ձեռին, մինչ սիրտն կը խնդայր, ոգին կը յուզէր, բերանն խօսէր, միտքն ուստոստէր: — Երգեց, այո երգեցին, ոգեցին, բայց ինչպէս, — Ո՛ր գիտէ:

Երկիր մը որոյ միանունըը վէտ վէտ կը պարեն. ուր բնութեան ամենազօր աչն սքանչելեաց տեսարանն պարզեր է. ցամաքն իբր ծով տարածուած, կապուտակ կատաղին կարծես կանաչ կոհակօք դէզ դէզ հաստասուած, աշխարհաստեղծ հնութեան կորովի զաւակունքն՝ հնացեալ աւտոր պառաւանջն նման արև որ գիւսակօցն խռի խռի զարդարեալ: Աշտան, Մասիս, Յուրան կորդուիք, վէսն Տաւրոս, Փարս, զանցն Սեպուհ, ծիծաղկոտ բլրակաց դասուց հսկելով. Եփրատն և Տիգրիս կարկաջաձայն՝ ծաղկազարդ վայելչութեանց ամենախնամ ու գեորիչք. Կուր և Արածանի, Ամանօրաբեր աստուածութեանց նուիրական լոգարանաց ընծայեալք, տարօնականն արօտանի, և Արաբատեան ամենաբեր ամենալիր արգաւանդին, բնութեան՝ Հայրենեաց և բնակչաց կայտառ աւուրց հրաշալեաց բազմադարեան տեսողք և վկայք. համառօտիւ, երկիր մը ուր հողն և ջուր, օդն և դիրք, երկինք և բնութիւն, բնակն և բնիկ, առհասարակ ծիծաղին, կայթեն, կայտոեն, ոգեն և պարեն, խայտան և երգեն, հնամ է ըսել՝ թէ անդ մարդ չերգէ, չօգէ, չլառի խանդիւ, չբանաստեղծէ: — Այո՛, երգէք Հայն, երգեցին հայ Նախահարք: —

Միշտ բազդադատական եղանակաւ ուզելով յառաջել, առնեմք 'ի քնին Հնդկ և իրանեան Արիքն:

Միշտ կրկին կերպ ոգևորութեան խանդի և աշխուժի տեսնուած է այդ կրկին Արիական ժողովրդոց մէջ. կրօնական և ազգային: Ռիդ-վեդայ և Չենդ-Ալետայ սրբազան մատեանք՝ այդ երկու համասեռ ժողովրդոց մնաւոր բարձրութիւնն կը պատկերեն մեր աչաց. կրօնական և ազգային խանդն՝ առանց որոշակի սահման

մ՛ունենալու անշատման՝ կարծես մի միայն զաղափարականի ծառայելու յատկացուած է մեծութեան, բարձրութեան. 'ի մի բան Արի անուան զաղափարն է՝ Ազատ միտքն է՝ որ կը մղէ այդ համասեռ ժողովուրդն խորհել, երգել, հնարել, խանդալ. անզգալի պատկերն զգալի կերպարանաւ կը բարձրանայ նոցա մտաց մէջ. իմանալի տեսութիւն մ'է այլ ևս. կը բանաստեղծեն, կը պատկերեն և կրօնական զաղափարներով կ'անմահացունեն. կրօնականն իմանալի՝ հիմ կը գրուի ազգային իմանալի բարձր զաղափարին՝ որ զգայական է. և այսպէս ազգային բարձրութիւնն կը յենու այլ ևս կրօնականի հիմանց վրայ: Այնպէս զի եթէ կրօնք տկարանան՝ Արիքն անարիք են. եթէ Արիք տկարանան՝ կրօնք պէտք է սրբուի: — Ոգոգի մը աշխոյժն կը վառի, ո՛ր և է պատճառաւ զգայական իր մը իմանալացու դասն կը բարձրանայ. ազգային կամ անհատական շահն կ'ըստիպէ զինքն ոգել, մահկանացու էակ մը խանդին ճարտարութեամբն կ'անմահացունէ: — Արիականի համար խանդ և պաշտօն և ազգ՝ մտաց և սրտի և ոգւոյ բարձրութիւնն է, 'ի մի զուգեալ: —

Ինչ տարբերութիւն այս կրկին համասեռ ազգաց և սոցա բնավայրն և կեդրոնատեղին հաստատապէս զրաւօղ հարազատ ժողովրդեան մտաց և սրտի և ոգւոյ բարձրութեան մէջ. նոյն խանդն՝ և նոյն և առաւել ևս աշխոյժ ոգին անմահ բուրմամբ ներշնչած է արարաւան հնագոյն փանդիւններն, ծածանուտ թելերն թրութաւցուցած են զգայուն սրտերն, ոգած և հնչեցուցած են արիական վսեմ զաղափարականն:

Ոչ եթէ մեծ ինչ է վէտեան և Ալետեան տաղերու ընդարձակութիւնն. ոչ թէ հաստաբետ հաստերն մեր առաջն և կը պարզուին, այլ համառօտ գրութիւնք են, հատուկոտոր մնացորդք, գերազանց ոգւոյ սակայն, պոր հարք կը տակեցին և համայն աշխարհ ընդունեց: Ոչ ապաքէն նոյն տարաբազմիկ պայմանաց մէջ են և ամեն հնութեան կտակք:

Առնումք 'ի քնին Գողթան մնացորդքն և երգոց նշխարքն, վիպականքն և հայ առասպելքն, անցեալն և նորն, հինն, և որ ինչ այժմ՝ ռամկին բերանն, լաւ ևս ոգւոյն մէջ՝

ուղեծուծին խորն կը գտնուի : այդ աւանդքն առնուիք և քննեմք : — Ո՛րքան բնական և ս՛րլափ հարազատութեան բնադրոյմն կը փայլի յայնս : Չիք անդ արտաքին և ոչ ինչ . ներքին և բնական է ամեն բան . արտաքին ազդեցութեանց և կամ նմանողութեան և ոչ զոյգն մի երևոյթ . զոգցես բնածին առաջին մարդոյն նախկին երազն է . անազդեցիկ մանկութեան առաջին ոգևորումն . և սակայն կատարեալ հասակի և բարձր կրթութեան ձիրք և կիրք , ազնուապէս պատկերացեալք : Երգք և երաժշտականք՝ որչափ որ ունիւք ՚ի ձեռին , նախածօր շրթանց բնադրոյմն՝ և մաքուր մատանց անխառն բնական երևոյթն կու տան մեր աչաց :

Աստուածութիւնք և դիւցական ծնունդք ևս՝ Արիական ժողովրդեան գերազանց սոհմին նախնական սերնդոց՝ Արարատեան բնակայրին յատուկ սերունդք և սեպհական ժառանգութիւնք կ'երևին : Այսու ևս ընդ միշտ արդարանայ մեր վարդապետութիւն և համոզումն , և անժխտելի հաստատութիւն կ'առնու , Ա .

թէ բնիկ Արիատեան Արարատեան բնագաւառն է , ընդարձակ սահմանաւ : Բ . Թէ յԱրարատայ նախապատմական ժամանակաւ գաղթած են Արիք ՚ի Հնդկիս և յիրանս և յայլուր , կրկին դարձած մասամբ , և այսպէս հետ զհետէ : Գ . Թէ Ոչ—Արիք ևս հաղորդութիւն ունեցած են . ազգած և ազդեցութիւն կրած են ՚ի բնիկ Արիատեանէ և ՚ի նորա ծննդոց :

Ուստի կրօնքն և պաշտօն՝ երգք և երաժշտութիւն և սովորոյթք քննեմք աստէն խմբովն և ընդերկար որչափ հնար է . և ակն յայտնի տեսնեմք հետեւութիւնն . վասն զի ինչպէս տեսանք՝ բանաստեղծութիւնք , երաժշտութիւնք , ոգւոյ խանդք , սերտիւ հաղորդակցութիւն ունին արիական կրօնական գաղափարաց հետ . կրկնեմք անգամ մ'ևս արիական մտաց՝ որտի և ոգոյ բարձրութիւնն քննութեամբ , յորում և մեր ներկայն երբեմն՝ և այժմեան ՚ի հնութենէ մնացորդքն և նշխարեալ աւանդքն աչաց առջև պիտի բերեմք պանծանօք :

Շարայարելի

ՀԵՒԼԵՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅ ՀԱՏԸՆՏԻՐ ԽՐԱՏԻՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼՔ Ի ՀԱՅ

(Ե . Տեգա Խոսալացի հայագիտի ուսումնասիրոտքիւն)

Ա .



ԱՅՈՒՆԻՄԱՅՈՍ յոյն իմաստասէրն կը համարէր՝ թէ մեծ գիրք մը մեծ չար էր . և եթէ այս գատաստանը կ'ընէր այն աշխատութեան համար , զոր մեծ հատոր մը կրնայ պատճառել անոր պարունակութեան խելամոռելու և մտաց մէջ ամփոփել ջանալու պատճառաւ , ըսել չու գեր անչուշա՝ թէ գրեցիկի մը ստուած աշխատանքն միշտ փոքր ըլլան : 1853ին վենետիկոյ Միխիթարեանք , ազգային հին գրականութեան համեզ ու համա-

ռօտ գրուածոց հաւաքման մը ձեռք զարնելով , որ վարչի մնար այն գործունեայ հրատարակողաց աւելի մեծ և նշանաւոր հաւաքմանց , կը տպագրէին հատորիկ մը Բաւք խրատոց եպիսկի իմաստասիրաց խորագրով . և կը յուսային թէ հաճոյականք և օգտակարք՝ անալըստուղ պիտի չլլային իրենց հայազգայնոց : Արուեստական ճոխաբանութեամբ ու գրաբար լեզուով գրուած յառաջաբանին մէջ , կ'ըսէին թէ այն հատորներու իբրու երախայրիք ըն-